ԱՅԱՍ ՆԱՎԱՀԱՆԳԻՍՏ-ՔԱՂԱՔԸ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ

Մ. Հ. ՃԵՎԱՀԻՐՃՅԱՆ

Միջերկրական ծովի հյուսիս-արևելյան ծայրամասում, Աղեքսանդրյակի ծոցի ափին, այժմ կա մի փոքր և անշուք գյուղ, որն ունի մոտ 600 շունչ բնակչություն և կոչվում է Այաս։ Գյուղի դիրքը հնադարյան քարտեզներում նշված է Աղեքսանդրյակի ծոցի հյուսիսային եզրին, այժմ Յումուրթալըք լիման կոչված խորշի մուտքի մոտ։ Այասը բնական պատվարներով պաշտպանված է Միջերկրական ծովի քամիներից, որոնք մեծ մասամբ փչում են հարավ-արևմուտքից։

XIII—XIV դարերի ընթացքում Այասը Կիլիկիայի հայկական պետության այն նշանավոր նավահանգիստն էր, որը միջազգային առևտրի բնագավառում լուրջ մրցակից է եղել Եգիպտոսի Ալեքսանդրիա նավահանգստի համար։ Այս պատճառով էլ մամլուկ սուլթանների բանակները Այասի վրա բազմիցս ավերիչ հարձակումներ են կատարել։ Թեև հայերը ունեին այլ նավահանգիստներ, ինչպիսիք էին Կոռիկոսը, Լամասը, Սելևկիան և մյուսները, սակայն դրանք չունեին Այասի բոլոր հարմարությունները և առավելությունները։ Կիլիկիայի հայ արքունի և ֆեոդալական ամենաամրացված ծովեզրյա քաղաքներից Կոռիկոսն անգամ, համաշխարհային առևտրի համար պիտանի պայմանների տեսակետից, Այասից հետո գրավում էր երկրորդ տեղը։

XIII—XIV դարերում Այասի համբավը այնքան էր տարածվել, որ Եվրոպայի երկրների մի շարք բանաստեղծներ իրենց ստեղծագործությունների մեջ հիշում էին Այասի անունը։ Այդ հեղինակներից են Ջիովաննի Բոկաչչիոն (1313—1375 թթ.), Արիոստոն (1473—1533 թթ.), Կիպրոսի Պետրոս Ա թագավորի քարտուղար, հայոց Լևոն վերջինի կտակարար՝ Ֆիլիպ Մեզիերը (վիպասան), անգլիացի բանաստեղծ Չոսերը (1328—1400 թթ.)[1], անգլիացի բանաստեղծ Ալեթա Ուելը։

* * *

Այասը հիմնվել է մ. թ. ա. VIII—VI դարերում, հունաստանցի գաղթականների կողմից, որպես առևտրական գաղութ և կոչվել է Եգէ (ΑΙΓΑΙ), որը նշանակում է ալիք։ Նա կոչվել է նաև Եգեաս, լատինները այն անվանում էին Եգեա (AEGAE), Իտալիայի ժողովուրդները՝ Լայազզո, Այազզո, Այաչի, Լայաս (Lagazzo, Ajazzo, Ajacii, Lajas, Layas)*։ Ժամանակի ընթացքում քաղաքին տվել են նաև այլ անուններ։ Այասը II դարի սկզբներին, Հռոմի Ադրիանոս կայսեր անունով կոչվել է Ադրիանա (*Hadriana*)։ Քաղաքը ժամանակավորապես անվանվել է նաև Ալեքսանդրոպոլիս (*Alexsandropolis*), Մակրինոպոլիս*[2]*։*

---

1 Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 393—394։

2 Տե՛ս նույն տեղում, էջ 357։

Հունաստանցի գաղթականները այս վայրը նախընտրել էին նկատի առնելով նրա բնական հարմարությունները և առավելությունները որպես նավահանգիստ։ Հին Այասի ավերակները տարածվում են խորշի կենտրոնից դեպի ծով երկարող պարանոցի, նավահանգստի ծոցի կենտրոնում գտնվող կղզյակի և ծովափից վեր բարձրացող թեթև զառիթափի վրա։ Հյուսիսի կիսաշրջանակի մեջ են գտնվում ցորենի և բամբակի ընդարձակ, հարթ և բերրի դաշտերը։

Այասի ծովեզրյա նշանավոր բերդը գտնվում է նավահանգստի կենտրոնում, պարանոցի և ցամաքի միացման վայրում։ Իսկ պարանոցի ծայրի դիմաց, ծովում երևում է նավահանգստի կղզյակը, որը տափարակ, փոքր և երկարավուն մի խութ է։ Սրա վրա կառուցված է ծովային ամրոցը, որը այժմ կիսավեր վիճակում է։ Այասի ցամաքային և ծովային ամրոցները կառուցվել էին նավահանգիստը պաշտպանելու համար։

Այժմյան Այասի բնակիչների տները կառուցված են բերդից հանված շինանյութերով։ Գյուղի նոր մզկիթը կառուցված է ուղղակի բերդի շրջափակի մեջ։ Գյուղի շուկան ունի 5—6 խանութ։ Բոլոր տները քարաշեն են, մասամբ երկհարկանի։ 1935 թ. մարդահամարի ժամանակ բնակչությունը եղել է 667 հոգի, իսկ 1956-ին այդ թիվը ավելի էր նվազել։ Խոշոր հողատերերի ստեղծած տնտեսական նեղ կացության պատճառով Այասի բնակչությունը օրըստօրե գաղթել է Ադանա, Ջեյհան, Մերսին և այլ քաղաքներ։ Ամայացել է հին նավահանգիստը։ Քարաշեն բնակարանների կեսը մնացել է անմարդաբնակ։ Այասում դեռևս կան նախակրթարան, կապի բաժանմունքի շենք և մաքսատուն։ Մաքսատան գործունեությունը մնացել է լոկ ավանդական։ Այասի նավահանգիստը այլևս չեն այցելում բեռնատար կամ մարդատար նավեր։ Գյուղը այժմ նավամատույց անգամ չունի։ Չկան նույնիսկ մաքսանենգներ։ Ծովափին կան միայն ձկնորսական մի քանի նավակներ։ Գյուղը կառուցված է բերդի ավերված պարիսպների և աշտարակների հետ խառնիխուռն դասավորված։ Շատ տներ ուղղակի հենված են բերդի պարիսպներին։ Գյուղի արևմտյան կողմի թաղամասում նկատվում են հին Այաս բերդաքաղաքից մասեր։ Այս թաղամասում դեռևս երևում են հին մեհյանի սյունաշարերը, որոնք մեծ չափով թաղվել են հողի մեջ։ Երևում են նաև հնադարյան շենքերի մնացորդներ, որոնք հին հունական, հռոմեական և բյուզանդական շրջանի շինության դրոշմներ են կրում։ 1956 թ. մեր այցելության ժամանակ այս թաղամասից գտանք բյուզանդական դրամներ և մանր առարկաներ (այդ թվում առատության և արգասաբերության դիցուհու մի արձանիկ)[3]։ Այասում գտնվել են բազմաթիվ արձանագրություններ, որոնցից Հռոմի և Բյուզանդիայի տիրապետության շրջաններին վերաբերողներից մի քանիսը անձամբ տեսանք։ Սակայն այժմ, դժբախտաբար, Այասի ոչ մի հուշարձանի վրա չի թողնվել հայերեն արձանագրություն։

Այասի հյուսիսային ծայրամասում նշմարվում է աղյուսաշեն մի կառույցի փլատակ, որը, հավանաբար, բյուզանդական շրջանի շենք է եղել։ Կողքին կան կամրջի ոտքի հետքեր։

---

3 Հայաստանի պատմ. պետ. թանգարան, № 2045։

Այասի արևմտյան ծովափին կան մարդահասակ բազմաթիվ քարայրներ, որոնք երկարում են դեպի խորքերը։ Հայոց տիրապետության ժամանակ Այասի այս մասը անվանվում էր Յալոն, ուր օտարերկրյա վաճառականները նավերով բերած իրենց ապրանքներն էին բեռնաթափում և հիշյալ քարայրները իբրև մթերանոց էին օգտագործում։ 1320 թ. Օշինի որդի Լևոն Դ թագավորի կողմից վենետիկցիներին տրված արտոնագրում կան Այասի ծովային բերդի [in castro maris] և Յալոն [Jalon] ծովափի մասին հիշատակություններ[4]։ Յալոնի քարայրները շատ ժամանակ փախստականների համար ծառայել են որպես թաքստոց։ Գյուղի արևմտյան կողմում, ծովափին բարձրանում է օսմանյան կայսր Քանունի Սուլեյմանի 1535 թ. հրամանով կառուցված աշտարակը։ Երկար ժամանակ իբր դիտանոց գործածված այս աշտարակի դռան վրա դեռ մնում է կառուցողի արաբատառ արձանագրությունը։ Աշտարակը լավ է պահպանվել։ Դրա մոտ, արտերի մեջ, բարձրից դիտելիս երևում են մեծ շենքերի հիմքի հետքերը, որոնք հողի հետ հավասարված են։ Գյուղի ետևում բարձրացող բլրակի վրա և ծայրամասերում նկատվում են հին շինությունների այլ հետքեր։

Նկ. 1. Այասում գտնված առատության և արգասաբերության դիցուհու արձանիկ։

Առաջին անգամ Ռուբինյան պարոն Լևոն Ա-ի (1123—1137 թթ.) իշխանության ժամանակ էր, որ հայերը տիրեցին Այասին։ Քաղաքն այդ ժամանակ գրեթե լքյալ և ավերված վիճակում էր։ Ապա կարճատև մի ժամանակով Այասին տիրեց Անտիոքի իշխանությունը, որից հետո՝ Բյուզանդիայի կայսրությունը (1137—1145 թթ.)։

Պարոն Թորոս Բ-ն (1145—1169 թթ.) Բյուզանդիայից վերագրավեց Ռուբինյան իշխանության կորցրած Կիլիկիայի երկրամասը։ Նվաճումների սկզբնական շրջանում բյուզանդացիներից վերագրավվեց նաև Այասը։ Այդ թվականից սկսած երկու դար Այասը մնաց հայերի ձեռքում։

Հին նավահանգիստ Այասը մեծ չափով կարևորություն է ստացել Լևոն III-ի ժամանակ։ Նա և նրա հաջորդները, գնահատելով միջազգային առևտրի ընձեռած տնտեսական և քաղաքական օգուտները, Այասի նավահանգիստը օժտեցին զանազան շենքերով։ Կառուցվեցին մաքսատուն[5] (բաժտուն), նավամատույց, փարոս, մթերանոցներ, պետական պաշտոնյաների ապարանքներ, իսկ ծովափին և նավահանգստի կղզյակի վրա՝ ամրոցներ, վաճառանոց-

---

[4] V. Langlois, Le trésor des chartes d'Arménie ou cartulaire de la chancellerie royale des Roupéniens, Venise, 1863, էջ 180—181։

[5] Նույն տեղում, էջ 178։

ներ, պանդոկներ (fonduc) և այլ շենքեր։ Առևտրին ավելի զարկ տալու համար Հայ թագավորները հատուկ արտոնագրեր էին տալիս Միջերկրականի լատին երկրների, հատկապես իտալացի և ֆրանսիացի վաճառականներին։ Այդ երկրների համայնքները առանձին թաղամասերում կառուցել էին եկեղեցիներ, դատարաններ, մթերանոցներ, խանութներ, իջևանատներ, կապելաներ և այլ շենքեր։ Այդ մասին ընդարձակ տեղեկություններ են պարունակում Վենետիկի, Վատիկանի, Ջենովայի, Տուրինի, Մալտայի, Նեապոլի, Պրովանսի, Մոնպելիեի, Մադրիդի, Բարսելոնի, Արագոնի[6] և Եվրոպայի այլ վայրերում գտնվող դիվանատներում կամ արխիվներում մինչև օրս պահպանված Կիլիկիայի Հայ թագավորների տված արտոնագրերը, պարգևագրերը և նման այլ փաստաթղթերը։ Այասի մաքսատան մեծ չափերի հասնող հասույթը պատկանում էր Սսի արքունի գանձատանը։ Այասի նավահանգստի և մաքսատան գործունեության մասին մեզ հասել են գրավոր որոշ տեղեկություններ, որոնք գաղափար են տալիս մաքսի և առևտրի շնորհիվ ձեռք բերված օգուտի մասին։ Այասի նավահանգիստը տալիս էր Կիլիկիայի հայկական պետության շահույթի մեծագույն մասը։

Քաղաքի բարգավաճմանը զուգընթաց կառուցվել են նաև արհեստանոցներ. գրասենյակներ, օտար լեզուներ ուսուցանելու հատուկ դպրոցներ և այլ հաստատություններ։ Եվրոպայի արխիվներում Ղ. Ալիշանի գտած փաստաթղթերի բովանդակությունից պարզվում է, որ Այասում աշխատող պաշտոնական քարտուղար և թարգմանիչներից բացի, կային ֆրանկ, արաբ և այլ լեզուների թարգմանիչներ[7]։

Այասի լատիներեն լեզու սովորեցնող դպրոցը կոչվում էր «Վարժարան լատին լեզվի»[8]։ Հիշատակելի են օտարերկրացի մի քանի լեզվաբաններ, որոնք դասավանդել են Այասում։ Այսպես, օրինակ, 1274 թ. Այասում է աշխատել քերականագետ Ֆիլիպպոս Սոլդանուսը (Magister Filippus Soldanus, Doctor grammatice)։ 1318 թ. Պապը Դոմինիկյան վանականներից Ռայմունդ Ստեփանիի (Raimundum Stepani) գլխավորությամբ ուղարկել էր լատին լեզվի ուսուցիչներ։ Հիշվում է նաև իտալացի քերականագետ Պետրոսի անունը։

Այասում գտնվել են օտարերկրյա առևտրականների ներկայացուցիչներ, Վենետիկի «պայլոզ»-ներ, հյուպատոսներ, նոտարներ, դրամափոխներ, վաշխառուներ, նավահանգիստներին հատուկ «մարդադավ» կանայք և ամեն դասակարգի մարդիկ։ Այասում գործող արհեստավորների թվում հիշվում են նաև արքունի փողերանոցի «դրամահատք»[9]։

Այասի նավահանգստում առևտրական մենաշնորհյալ գործունեություն և ներկայացուցչություն են ունեցել 24 տարբեր ազգերի և պետությունների պատկանող համայնքներ։

XIII—XIV դդ. Այասում, նավահանգստային քաղաքներին հատուկ ամեն տեսակի արհեստների հետ զուգընթաց, գործել են նաև ձեռագիր մատյաններ գրող գրիչներ։ Այնտեղ արտագրված և մեզ հասած հայերեն ձեռագրերից

---

[6] V. Langlois, Essai Historique et critique sur la constitution sociale et politique de l'Armenie, 1860, էջ 21—37։

[7] Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 366։

[8] Նույն տեղում։

[9] Նույն տեղում, էջ 371։

Ստեփաննոս Տոյներիցանցի գրած հիշատակարանից պարզվում է, որ նա ՉԾԹ (1310) թ. ապրել է Այասում, ուր եկել է Կիպրոսից։ Նա Այասում արքաեղբայր Հովհաննես արքեպիսկոպոսի խնդրանքով արտագրել է մի ձեռագիր մատյան։ Նրան օժանդակել են նաև Ստեփաննոս Գորգոնցը և «աստվածավախ» Հակոբը[10]։

Նշանակալի է նաև 1311 թ. Այասում Պետրոս քահանայի կողմից գրված Ավետարանի հիշատակարանը, ուր նշված է հետևյալը. «... որ լիացեալ կատարի թիւ համարի Հայկազեան տումարիս ՉԿ. (1311), 'ի քաղաքիս Եգիացւոց, 'ի յաստուածաբնակ կղզիս, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս։ Եղեւ աւարտումն սորա հայրապետութեան տեառն Կոստրնդնա[յ] և 'ի թագաւորութեան Աւշնի»[11]։

Հին դարերում Այաս բերդաքաղաքը ունեցել է երկու շարք պարիսպ և գրավել է այժմյան գյուղի հին ու նորաշեն թաղամասերը, սահման ունենալով արևելքից՝ նավահանգստի ծովափը, արևմուտքից՝ առվակը, հարավից՝ ծովը, իսկ հյուսիսից՝ գյուղի ծայրամասը։ Բերդաքաղաքի պարիսպներից դուրս եղել են բնակավայրեր, որոնց ավերակները այժմ տեղ-տեղ երևում են։ Առվակի վրա եղել են կամուրջներ, որոնց միայն հետքերն են մնացել այժմ։

Կիլիկիայում բնակություն հաստատող հայերը ընդհանրապես բնակավայրերը կառուցում էին լքված կամ ավերված բյուզանդական քաղաքների տեղում։ Այասում միջնադարյան դրոշմ կրող շինությունների մնացորդներից դատելով հնարավոր չէ պարզել, թե դրանցից որոնք՝ հայերի և որոնք՝ բյուզանդացիների կողմից են կառուցվել։

Ցամաքի և ծովամիջյան բերդերի մասին ժամանակագրական տեղեկություններ կան Սամվել Անեցու և Ներսես Պալիենցի մոտ[12]։

Ներսես Պալիենցի ժամանակագրությունից երևում է, որ Եգիպտոսի մամլուկների 40000 ձիավորներից և անթիվ հետևակներից բաղկացած զորքը, ցամաքից հարձակվելով, նախ գրավել է Այաս քաղաքը, ծովեզրյա Մինա բերդը և ապա կղզյակի ամրոցը։

Եգիպտացիների կողմից նախ ծովեզրյա Մինա բերդի և ապա 12 օր հետո կղզյակի Ծվոր [կամ Ներսի] բերդի գրավումը հաստատված է մի այլ հիշատակությունով։ Այասը ավերելու գործողությունները տևել են 23 օր[13]։

---

10 Նորայր եպս. Պողարյան, Մայր Ցուցակ ձեռագրաց Սբ. Հակոբյանց, Երուսաղեմ, 1968, հատ. Գ, էջ 145։

11 Բաբգեն Աթոռակից Կաթողիկոս, Ցուցակ ձեռագրաց Անկյուրիո Կարմիր վանուց եւ շրջակայից, Անթիլիաս, 1957, էջ 1112։

12 1322 թ. ապրիլի 23-ին Այասի նավահանգիստը ավերող մամլուկների հարձակումը մանրամասն նկարագրող Ներսես Պալենցը գրել է.

«... ԻԳ. [23] ապրիլի, առին զմինային բերդն, զի ծովն ցամաքեցաւ և 'ի ներս գնաց. և Տաճկնին 'ի ծովէն եկին և կտրեցին զճանապարհն, որ 'ի Ներսի բերդն /և 'ի ծ/ովն ոք չկարէ գնալ. և գերեցին անդ /անթիւ/ անձինք և անբաւ առին /և ապա ն/ստան սղարելով 'ի վերայ Ներսի բերդի/ն։ Եդին բ/արան և զամենայն 'ի փուլ ածին և զամենայն /դրունսն/. և զբնչքայ քաղաքին բերեալ կամ/ուրջ կապ/եցին ընդ ծովն 'ի ներս, մինչ եկին /մերձ պար/իսպի բերդին և նետախորով առնէ/ին զմարդ/իքն, որ քայլէին 'ի դրանն կողմն /դղեկին, ո/րով յամենայն կողմանց սաստկաց/աւ մարտ/ն»։

«Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ.», կազմեց Վ. Ա. Հակոբյան, հատ. Բ, Երևան, 1956, էջ 188—189։

13 Տե՛ս Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 389, 390։

Սամվել Անեցու պատմությունը շարունակողը թողել է մի հիշատակություն 1322 թ. Այասի գրավման և կործանման մասին. «ՌՅԻԴ. [1324 ? թ.] Եմուտ Մսրցին 'ի Կիլիկէ, և ԻՌ մարդ գերեաց՝ և զբազումս սպանին և յոլով տեղիս այրեցին. և զԱյաս 'ի սպառ ջնջեցին, և զմինիրան և զբերդն քակեցին»[14]։

Այդ օրերին պատահել է բնության անսովոր երևույթներից մեկը. ծովի ջուրը «քաշվել է» ծովեզրից և Մինա բերդի ծովահայաց պարիսպները մնացել են անպաշտպան[15]։ Մինայի պաշտպանների երկօրյա դիմադրությունից հետո բերդը գրավել են եգիպտացի մամլուկները։ Կղզյակի վրա գտնվող ամրոցը գրավելու համար նրանք քաղաքից բերված տախտակներով, դռներով և այլ փայտյա շինանյութերով ծովի ցամաքած մասերից սկսելով մինչև ծովային բերդը կամուրջ և լաստեր են կազմել, հավանաբար օգտվելով նավահանգստի շուրջը պատող խութերից և խարակներից, լաստերի և կամուրջների վրա տեղավորել են քար և հրկիզող նյութեր նետող մեքենաներ՝ բաբաններ, որոնցից կղզյակի «Ներսի բերդի» վրա կրակ են տեղացել։ Ծխից և կրակից ազատվելու համար ամրոցում պաշարվածները՝ «որ քայլէին 'ի դրան կողմն ղեկին» «նետախորով» էին լինում։ Այս պատճառով, ծովային բերդում գտնվողները, Կիպրոսի Հենրի թագավորի կողմից Այասին օգնության ուղարկված 9 «խալեներով» [ռազմանավերով], փախուստի դիմեցին։

XIII—XIV դարերում Կիլիկիայի հայերը Այաս նավահանգստի ծովեզրյա բերդը անվանում էին Մինայի բերդ, որը արաբերեն նշանակում է «նավահանգստի բերդ»։ Ժամանակագրությունների մեջ հիշված «Այասայ մինայ» նշանակում էր Այասի նավահանգիստը, որ գտնվում էր քաղաքի արևելյան կողմում՝ ծովեզրի և մոտակա կղզյակի միջև և նավերի համար ապահով մի ապաստարան էր։ Քաղաքի արևելյան կողմում, ծովափից մոտավորապես 500 մետր հեռու, կղզյակի վրա գտնվող հայկական ամրոցը պաշտպանում էր նավահանգստի մուտքը։ XIII—XIV դդ. հայերն այդ ամրոցն անվանում էին «Ներսի բերդ», «բերդն ծովին» կամ «Ճզոր», որը արաբերեն նշանակում է կղզի։ Բերդը վերևում ուներ փարոս։ Փոքր կղզյակը ունի ցամաքի հետ միացնող ստորջրյա խութերի ու խարակների մի շարան։ Այս խարակները քաղաքի հարավային կողմից սկսվելով և դեպի կղզյակը մի կիսաշրջան կատարելով վերջանում են նրա հյուսիսային կողմում։ Փոթորկի ժամանակ այս խարակները և կղզյակը կոհակաբեկի դեր են կատարում։

Այասի ծովեզրյա Մինայի բերդը Այաս քաղաքի բերդն էր և ուներ միաշարք պարիսպ, որի աշտարակները շտեմարաններ էին և վարձվում էին Միջերկրականի լատին պետությունների առևտրական ներկայացուցիչների կողմից։

Այսպիսով, Այասը բաղկացած է եղել քաղաքից և Մինա ու Ճզոր բերդերից։ Քաղաքը ակվեդուկների միջոցով ջուր էր ստանում Բարիքարկի մոտակա լեռներից ու Ջահանի գետաբերանից։

Մինա բերդը պարփակում էր նավահանգստի և քաղաքի ապահովության

---

[14] «Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք 'ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 167։

[15] Այասի ծովափին սովոր է մեծ տեղատվության և մակընթացության երևույթը, որով կարելի կլիներ բացատրել ջրերի նվազելը։



Նկ. 2. Այասի Մինա և Ճզոր բերդերը՝ նկարված հարավից



Նկ. 3. Այասի Մինա բերդի հյուսիս-արևմտյան անկյունը

պետական ուժերը և մասնավոր անձանց պատկանող հատուկ մթերանոցները։ Կղզյակի Ճզոր ամրոցը հսկում էր նավահանգստի երթևեկության, մուտքի ապահովության և մաքսի ու ռազմածովային խարսխի գործերը։

Նավահանգստի խորքում բարձրացող բլրակի վրա, ուր այժմ ժանդարմների պահականոցն է, եղել է Այասի նավահանգստի մեծ փարոսը։ Հիշյալ պահականոցը կառուցել են փլած փարոսի քարերով։ Ճզոր և Մինա բերդերի վրա եղել են նավահանգստի մուտքի փարոսներ։ Հայկական տիրապետության ժամանակ պաշտոնական կառույցները եղել են քարաշեն, իսկ քաղաքացիական շինությունների մեծ մասը՝ փայտաշեն։ Այս պատճառով էլ մեծ հրդեհներից հետո այրված շենքերից մնացել են միայն հիմքերը։

Հայերի ժամանակ կառուցված Այաս քաղաքը մամլուկների ավերումների պատճառով մեծ փոփոխությունների է ենթարկվել և վերջում վերածվել է անճանաչելի մի ավերակույտի։ Այժմյան Այասի ծովեզերքի և քաղաքի վերջին վերակառուցումները կատարվել են Օսմանյան կայսրության հզորության շրջաններում։

1516 թ. օսմանյան կայսր Յավուզ սուլթան Սելիմը Եգիպտոսի մամլուկներից վերջնականապես գրավեց Այասը, իսկ Քանունի սուլթան Սուլեյմանի ժամանակ քաղաքը լրիվ նորոգվեց և նրա արևմտյան կողմում կառուցվեց հիշյալ աշտարակը, որտեղից գետերը հսկելու էին նավահանգիստը և Յումուրթալըքի ծոցի երթևեկությունը։ Ծովեզրյա Մինա բերդի վերջին նորոգությունը կատարվել է օսմանյան թուրքերի ժամանակ և ունի հայերի, մամլուկների և վենետիկցիների խառն վերակառուցումների մասեր։ Իսկ կղզյակի վրայի Ճզոր բերդը մնում է Կիլիկյան Հայաստանի ժամանակվանից՝ ավերված վիճակում, որովհետև եգիպտացիների կողմից Այասը 1322-ին ավերվելուց հետո ծովեզըրյա բերդը և քաղաքը 1323-ին վերանորոգվեցին, բայց Ճզորը նորոգելու համար հայերին երբեք թույլտվություն չտրվեց։ Այս պատճառով էլ Ճզորը ունի զուտ կիլիկյան հայկական ռազմա-ճարտարապետական ոճ։

Ծովեզրյա բերդի հատակագիծը անկանոն ուղղանկյուն քառանկյունի ձև ունի։ Բերդի մեծ մասը շրջապատված է ծովով։ Հավանական է, որ կիլիկյան Հայաստանի ժամանակաշրջանի Մինայի բերդի հատակագիծը եղած լինի նույնը, ինչ տեսնվում է այժմ։

Ծովային Ճզոր բերդի հատակագիծը հարմարեցված է կղզյակի ձևին։ Սա ծավալով փոքր մի ամրոց է։ Նրան շրջապատող միաշար պարիսպը լրիվ փըլված է, այժմ կանգուն է միայն դղյակի առաջին հարկը։

Հայկական տիրապետության ժամանակ Այաս քաղաքը ունեցել է հիշարժան կառույցներ։ Բացի Մինա կոչվող նավահանգստից, Ճզոր և Մինայի բերդերից ու Յալոն[16] ծովեզրյա բեռնաթափ քարափից, քաղաքում գոյություն են ունեցել հայկական եպիսկոպոսարան և հունական մետրոպոլիտություն։ Քաղաքի թաղամասերից մեկը կոչվել է Ալամանաց դուռ (Porta Alamanorum)[17]։ Այասում օտարներն էլ ունեին մեծ շենքեր, որոնցից հիշատակելի են ջենովացիների Ս. Լավրենտիոս և վենետիկցիների Ս. Մարկոս եկեղեցիները։ Այասի նշանավոր Ս. Ղազար տաճարը հավանաբար պատկանում էր հույներին[18]։

---

16 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 365։

17 Նույն տեղում, էջ 360։

18 Նույն տեղում, էջ 365—366։

Այասի արքունի ապարանքը (Domus Regis Armenia), որ ներկայացնում էր հայկական թագավորության պետական օրգանների կենտրոնական շենքը, գտնվում էր «հանդէպ դրան բերդի ցամաքին», այսինքն այն տափարակում, ուր այժմյան Այաս գյուղի փոքր շուկան է գտնվում։ Այդտեղ էր և Այասի հրապարակը։ Քաղաքում կային նաև Դարպաս Արքունի (Curia Regis Armenie) և Դքսական Դարպաս (Curia Ducalis)[19] պետական բարձրագույն պաշտոնատների շենքերը։

Հայերի և խաչակիր ասպետների նավերը արտոնված էին ուղղակի Մինայի բերդի առաջ խարսխելու և ապրանք բեռնաթափելու կամ բեռնելու։ Վեճերի առաջն առնելու համար քաղաքի և նավահանգստի որոշ մասերը հատկացված էին տարբեր ազգերի պատկանող համայնքներին։ Հայերի զինակից Տաճարական ասպետների նավերի համար նավահանգստում առանձնացված էր հատուկ տեղ, որը կոչվում էր «Բեռնաթափք Տաճարականաց Մինայի Այասոյ» (Discargatorium Templi)[20]։ Այասի նավահանգստի տերիտորիայում ծովն այժմ ունի 3—6 մետր խորություն, որը անբավարար է արդի բեռնատար կամ մարդատար նավերի համար։

Այասի նավահանգիստը, ինչպես արդեն ասվեց, հնում շրջապատված է եղել կոհակաբեկով, որի կառուցման ժամանակ որպես հիմք օգտագործվել են նավահանգիստը շրջապատող խարակներն ու խութերը։ Հավանաբար Այասի վրա 1322 թ. եգիպտացիների կողմից կատարված հարձակման ժամանակ այս կոհակաբեկի մի մասը ավերվել է։

Այասի նավահանգիստը միջազգային առևտրի պատմության մեջ ուրույն տեղ է գրավել։ Մերձավոր Արևելքի մեծագույն մայրաքաղաք և խալիֆայության աթոռանիստ Բաղդադի 1258 թ. մոնղոլների կողմից կործանումից[21], եգիպտացիների կողմից Անտիոքի (1268 թ.) և Աքրայի [Ակրա, Պտղոմայիս, Saint-Jean d'Acre, 1291 թ.] գրավումից հետո Միջերկրականի նավահանգիստներից, Ասորիքից և Միջագետքից դեպի Կենտրոնական Ասիա, Չինաստան, Հնդկաստան և Ռուսաստան տանող քարավանային ճանապարհի ուղղությունը փոխվեց։ XIII դարի երկրորդ կեսին Մերձավոր Արևելքի երկրների միջև կատարված սահմանների մեծ փոփոխության պատճառով եվրոպացիների և մոնղոլների համար ձեռնտու միակ քրիստոնյա երկրի առևտրական նավահանգիստը Այասն էր մնացել։ Միջազգային քաղաքական այս նոր վիճակը նպաստավոր էր հայերի համար։ Եգիպտոսի մամլուկներին թշնամի մոնղոլները և լատինները միմյանց հետ հարաբերություն ունեին Այասի վրայով գնացող քարավանային ճանապարհների միջոցով։ Մոնղոլների տիրապետության ենթակա ասիական երկրների և եվրոպական ժողովուրդների առևտրականները միայն Այասում կարող էին անվտանգ գործառնություն կատարել։

Այասը տարանցիկ ճանապարհների մի ցանցով կապված էր Տրապիզո-

---

19 Նույն տեղում, էջ 366։

20 Նույն տեղում։

21 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Գ, Երևան, 1952, էջ 263։

նի, Կովկասի, Ռուսաստանի[22], Թավրիզի[23], Ասորիքի, Միջագետքի, Եգիպտոսի, Փ. Ասիայի ու Բյուզանդիայի բազմաթիվ քաղաքների հետ։

Միջնադարի միջազգային առևտրի պատմությամբ զբաղվող գիտնականներից մի քանիսը ուսումնասիրել են նաև Այասից Թավրիզ տանող տարանցիկ ճանապարհը։ Օտարերկրյա ուսումնասիրողների կարծիքները նկատի առնելով, Հ. Մանանդյանը հանգել է այն եզրակացության, որ Այասից Սեբաստիա ու Թավրիզ տանող քարավանային ճանապարհը անցնում էր Այաս-Կոպիտառա-Կոկիսոն-Շար-Կեսարիա-Սեբաստիա ուղիով[24]։

Նշանավոր վենետիկցի ուղեգիր Մարկո Պոլոն Կիլիկիայի հայկական թագավորության ու Այասի մասին տալիս է մի շարք տեղեկություններ։ Իր ուղեգրության մեջ նա գրում է. «Նրանք [հայերը] ունեն մի քաղաք ծովի վրա, որ կոչվում է Լայաս, որտեղ նրանք մեծ առևտուր են կատարում։ Որովհետև դուք պետք է իմանաք, թե բոլոր համեմեղենները և մետաքսյա ու արծաթյա կերպասները և ուրիշ արժեքավոր անոթները, որոնք գալիս են ներքին գավառներից, բերվում են այս քաղաքը։ Եվ Վենետիկի, Ջենովայի և ուրիշ երկիրների վաճառականները այստեղ են գալիս՝ վաճառելու իրենց ապրանքները և կամ գնելու՝ ինչ որ պետք ունեն։ Եվ որևէ անձնավորություն, վաճառական կամ ուրիշ, որ պիտի ճամբորդե ներսերը, իր ճամբորդությունը սկսում է այս Լայաս քաղաքից»[25]։

Առևտրական նպատակներին ծառայող նավահանգիստ լինելուց բացի, Այասը Կիլիկիայի հայկական պետության գլխավոր ռազմածովային նավահանգիստներից մեկն էր։ Այասում էր խարսխում Միջերկրական ծովի հայկական նավատորմը։ Մեր պատմագիրները հայկական ռազմանավերի մասին տեղեկություններ տալու տեսակետից ժլատ են եղել. միայն մի քանի աննշան փաստեր լույս են սփռում այս հարցի վրա։ Արաբ գրող Իբն էլ-Վարդի տված տեղեկության համաձայն, 1323 թ., եգիպտացիների կողմից Այասի վրա կատարված հարձակման ժամանակ, նավահանգստում գտնվում էին «Ատլաս», «Այաս» և «Շամա» անունները կրող ռազմանավերը[26]։ Դեռևս պարոն Թորոս Բ-ի ժամանակ հայերը ունեցել են նավատորմ, որի շնորհիվ Անտիոքի իշխանության հետ զինակցելով, բյուզանդացիներից գրավել են Կիպրոս կղզին։ Հիշատակելի է Լևոն III-ի՝ Կիպրոս կղզին այցելելուց հետո, վերադարձի ճանապարհին նրա առաջ կտրող թշնամիների հետ ունեցած ծովամարտը, որին մասնակցում էին Կիլիկիայի հայկական և Կիպրոսի Լուսինյան թագավորության զինակից ռազմանավերը։ Թշնամու ծովակալի ռազմանավը խորտակվելուց հետո օժանդակ նավերը դիմում են փախուստի։

1271 թ. հայերի զինակից Քոհպիլա Մոնղոլ խանի[27] կողմից Պապի մոտ իբրև պատվիրակ ուղարկված երեք Պոլոներին Աքքա տանելու համար հայոց Լևոն Բ (որդի Հեթում Ա-ի) թագավորը տրամադրել էր մի արքունի ցռկանավ,

---

22 Г. Г. Микаелян, История Киликийского армянского государства, Ереван, 1952, էջ 350—375։

23 Գ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 368։ Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Գ, էջ 262—263, 267։

24 Я. А. Манандян, О торговле и городах Армении, Ереван, 1954, էջ 287—291. Pegolotti Francesco Balducci, La pratica della Mercatura, գլ. Ձ։

25 Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հատ. Ա, Երևան, 1932, էջ 44։

26 Г. Г. Микаелян, նշվ. աշխ., էջ 100։

27 Քոհպիլա խանը հայ մատենագիրների Խուբիլայ խանն է։

որի շնորհիվ Այասից Աքրա գնացել ու վերադարձել էին անվնաս։ Այդ դարերում հայ նավապետների մեծ հմտությամբ ղեկավարած առևտրական նավերին կարելի էր հանդիպել նույնիսկ հեռավոր ծովերի վրա՝ Հնդկական օվկիանոսում։ XII—XIII դդ. հարկավոր եղավ հարստացնել հայերենի մեջ պակասող ծովային և նավագնացության բառապաշարը (տերմինները)։

Ծովահենների վախից վաճառականները երբեմն արժեքավոր ապրանքները բերդանավերով էին (լտ. galeon, թուրք. kalyon, kale) փոխադրում։ Հայերեն այդ բերդանավերը անվանվում էին ղալէ։

Այասում հայկական ռազմանավերը խարսխում էին ընդհանրապես Ճզոր կղզյակի (insula Ayacii) առաջ, իսկ ապրանք բեռնելիս կամ բեռնաթափելիս, նավերը ուղղակի խարսխում էին Մինայի բերդի առաջ։ Այասի մարապանի[28] տրամադրության տակ էին գտնվում նաև ռազմածովային խարըսխի մարտանավերը։

Հայկական տիրապետության շրջանում Այասի բնակավայրի տարածությունը ծովեզրում ունեցել է 3—4 կմ երկարություն և շուրջ 1,5 կմ խորություն՝ դեպի ներս։ Այս տարածության ամենագործուն կետը եղել է այժմյան Այաս գյուղի շուկայի գրաված մասը։

Ինչպես ասվեց, Այասը բազմիցս ավերվել է Եգիպտոսի մամլուկ սուլթանների բանակների կողմից։ Այասի վրա կատարված հարձակումների նպատակն էր հայկական պետության տնտեսությանը մեծ հարված հասցնել և Եգիպտական Ալեքսանդրիա նավահանգստի եկամուտները վերականգնել։ 1268 թ. Բայբարս մամլուկ սուլթանի բանակները հարձակվեցին Այասի վրա և ավարի տալով, քանդեցին քաղաքը։ Նույն սուլթանը 1274 թ. ցամաքից ու ծովից միաժամանակ, կրկնեց հարձակումը և ամբողջովին կործանեց ու ոչնչացրեց քաղաքը[29]։ 1284—1285 թթ. Բայբարս սուլթանը Այասի վրա ճնշում գործադրելով նավահանգստի եկամուտից շահաբաժին պահանջեց։ Այասում առևտրական գործողությունները այնքան շահավետ էին, որ 1294 թ. Այասից մեկը մյուսին վտարելու համար ջենովացիները և վենետիկցիները արյունալի կռիվներ մղեցին։ Նույն ժամանակ երկու կողմի ռազմանավերն էլ նավահանգստի առաջ պատերազմում էին իրար դեմ։ Վենետիկի նավատորմը պարտվեց, նրանց նավերն ընկան ջենովացիների ձեռքը, իսկ վենետիկցիները ցամաքում ավերեցին ջենովացիների ունեցվածքը։

28 Մարապան նշանակում է նավահանգստի ղեկավար, տնօրեն, պետ։ Կազմված է արաբերեն «մարա» [ծով] բառից և հայերեն «պան» վերջածանցից։

29 Թվականների ճշտման համար հարկ է երկու երևույթ աչքի առաջ ունենալ.

ա. ավարառության նպատակով Կիլիկիա արշավողների համար ձեռնտու էր տարվա աշնան ամիսներին շարժվելը։ Տեղատարափ անձրևների և ձնհալի պատճառով գարնան ամիսներին գետերը հորդանում էին և Դաշտային Կիլիկիան ցեխոտ ու անանցանելի էր դառնում, իսկ ամռան ամիսներին մահացու մալարիան, ջրի պակասը, շոգը և միջատները կոտորում էին հայերի թշնամիներին։ Աշնան ամիսներին օդը զովանում էր, մառանները լցվում էին երկրի բարիքներով։ Եգիպտացիները և սելջուկները իրենց հարձակումները կատարում էին աշնանը և գերիների ու ավարի հետ միասին տանում էին մեծ քանակությամբ ցորեն և այլ մթերքներ։

բ. ժամանակագրությունների մեջ ընդհանրապես տարեթվերի հետ միասին չեն հիշված ամսաթվերը։ Ըստ հայկական տոմարի, այստեղ պարզ չէ թե 551 և 552 թվերից որի հիման վրա պետք է հաշվել տվյալ պայմանական 1284/5, 1305/6 և այլ թվականները։ Այս պատճառով հիշյալ պայմանական թվականների ճշտման գործը թողնում ենք տոմարագետներին։

1305 թ. Այասը ասպատակելու նպատակով եկած Հալեպի ամիրայի հեծելազորքից հայերը շատերին կոտորեցին[30]։ 1320 թ. Եգիպտոսի մամլուկ Ան-Նասըր Մուհամմեդ սուլթանի բանակները հարձակվեցին Այասի վրա և մեծ կորուստներ կրելով ետ քաշվեցին։ 1321 թ. Թաթար Տիմուրտաշ զորավարը 30.000 հեծյալով և բազմաթիվ հետևակներով Կիլիկիա մտավ և ասպատակելով հասավ Այաս։ Նույն ժամանակ (1322 թ.) Եգիպտոսի Ան-Նասըր Մուհամմեդ սուլթանը 1320 թ. պարտության վրեժը լուծելու համար մեծ բանակով շարժվեց Այասի վրա։ Մի կողմից Տիմուրտաշի թաթարների և մյուս կողմից եգիպտացիների հարձակումների ճնշման տակ քաղաքը հիմնահատակ կործանվեց։ 1323 թ. հայերի և մամլուկների միջև կայացած համաձայնությամբ որոշվեց վերաշինել քաղաքը և միայն ցամաքի բերդը (Ան-Նասըր սուլթանի և Պապի դրամական օժանդակությամբ) և 15 տարվա խաղաղության դաշինք կնքվեց։ 1347 թ. Կիլիկիայի հայոց Կոստանդին թագավորը, Հռոդոսի ասպետների օգնությամբ, վերագրավեց Այասը, բայց նույն տարին Եգիպտոսի նավատորմը կրկին վերագրավեց քաղաքը։ 1365 թ. հայերի պաշտպան Կիպրոսի Պետրոս Ա Լուսինյան թագավորը նավատորմով Այաս եկավ ու հայերի օգնությամբ հրկիզեց քաղաքը։ 1368 թ. Կիպրոսի Պետրոս Բ Լուսինյան թագավորը Այասին տիրեց 10 ամիս։

Շարունակվող այսպիսի հարվածների տակ օրըստօրե անշքացող Այասը Կիլիկիայի հայկական պետության 1375 թ. վերջնական անկումից հետո ևս հանգիստ չմնաց։ Ամայացած նավահանգիստը XIV—XV դդ. ընկավ մամլուկների, Դուլկադիր-օղլու բռնապետների[31], Վենետիկի Հանրապետության և ապա Օսմանյան կայսրության տիրապետության տակ։ Մամլուկները Այասը կործանելով, հասան իրենց նպատակին։ Նսեմացած Ալեքսանդրիայի փառքը վերականգնվեց։ Մամլուկները հայկական պետության վերացմանը ևս նպաստեցին։ Կիլիկիայի հայկական պետության վերացման թվականից տարիներ առաջ իսկ, վենետիկցի առևտրականները, շահադիտական մղումով և ապագան նախատեսելով, հայերի թշնամի մամլուկների հետ բարեկամանալով, առևտրական դաշնագրեր էին կնքել։

Հայկական պետության անկումից հետո Այասը այլևս չկարողացավ իր հին փայլուն դիրքին վերադառնալ ու մատնվեց մոռացության։

XX դարի առաջին քառորդին Այասում և շրջակա գյուղերում մնացել էին բազմաթիվ հայ ընտանիքներ, որոնք զբաղվում էին գյուղատնտեսությամբ։ Նրանց մի մասը հայաջինջ կոտորածների ժամանակ սպանվեց, մի մասն էլ Սիրիայի անապատները աքսորվեց։ Վերջնական ոչնչացումից մի կերպ ճողոպրած մի բուռ կիլիկիացի հայեր, իրենց ավերված բնակավայրերը վերադառնալու ճանապարհին, Այասի մոտակա Դեմիրտաշ գյուղում սպանվեցին անխնա կերպով։

Այժմ Այասում հայեր չկան։ Այասի շրջակա բամբակի ու ցորենի արգասաբեր ընդարձակ այն դաշտերը, որոնք կոտորածներից առաջ պատկանում էին հայերին, այժմ գրավվել են թուրք խոշոր հողատերերի կողմից։

---

30 Տե՛ս «Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ.», հատ. Բ, էջ 512, Հեթում Բ թագավորի ժամանակագրությունում. «ՉԾԵ. [1306] խաղամն ու խնու Ալինախն յԱյաս կոտորեցին զՀալպա հեծելն՝ ժՌ. [10.000] տաճիկ սատակեցաւ»։

31 Շահսուվար դուլկադիրցին Այասը գրավել է 1467 թ.։

XIX դարում կիսականգուն վիճակի մեջ էին գտնվում Այասի միջնադարյան չորս եկեղեցիներ ու քաղաքը շրջապատող պարիսպներից մի քանի կիսափուլ պատեր ու աշտարակներ։ Գործում էր նաև Այաս գյուղի հայկական եկեղեցին։ Մեկ դար ժամանակամիջոցում դրանք ևս հավասարվեցին հողին և կորան անհետ։

* * *

Հրատարակված ուսումնասիրությունների մեջ Այասի մասին սպրդել են սխալներ, որոնք առաջանում են նախկին սխալների կրկնությունից։ Տեղին կլիներ մի քանի խոսք ասել դրանց մասին։

1. Մ. Չամչյանը իր Պատմության մեջ դրել է. «Այաս քաղաք ծովեզերեայ ’ի Կիւլիկիա. այն է Փայաս»[32]։ Բոլորին քաջ հայտնի է, որ Աղեքսանդրյակի ծոցում գտնվող Պայասը և Այասը տարբեր են իրարից։

2. Ներկայումս ձեռքով գծված նկարները վստահելի դիտական փաստ չեն կարող համարվել։ Այդպիսիներից մեկն է Այասի բերդի այն գրչանկարը, որտեղ հանդիպակաց կողմում նկատվում են բարձր լեռներ։ Ինչպես հայտնի է, իրականում Այասի մոտ և դիմացի կողմում լեռներ չկան։ Այս գրչանկարը նախ հրատարակվել է Վ. Լանգլուայի 1861 թ. լույս ընծայած աշխատությունում[33], ապա ընդօրինակվել է 1885 թ. Ղ. Ալիշանի «Սիսուանում»[34]։ Դրանից էլ ընդօրինակել են Կիլիկիային վերաբերող մի քանի աշխատությունների հեղինակները[35]։

3. Հայ դրամագետներից մի քանիսը գտնում են, թե մի որոշ ժամանակ Այասում գործել է Կիլիկիայի հայկական պետության փողերանոցներից մեկը։ Վիեննայի Մխիթարյաններից Օ. Սեքուլյանը, ուսումնասիրելով իրենց թանգարանում գտնվող կիլիկյան հայկական դրամների հավաքածուն, եկել է այն եզրակացության, որ Այասի փողերանոցի գործունեությունը համընկնում է Հեթում Ա թագավորի վերջին տարիներին, երբ 1266 թ. Մառի ճակատամարտում կրած պարտության պատճառով Սիս մայրաքաղաքը ավերվեց (1267—1271 թթ.)[36]։ Նա գտնում է, որ Հեթում Ա-ի կիտավոր խաչով պղնձե դրամների մեծ մասը պատրաստված է Այասում, իսկ մնացած մասը՝ Սսում։ Դրանց միջև իբրև տարբերություն ցույց է տալիս դրամը պատրաստած փողերանոցի քաղաքի անունը՝ ԱԻԱՍ և ՍԻՍ գրություններով։ Սակայն դրամի տարբեր դրոշմիչների վրա փորագրվել են նաև ԱԻԱ, ԱԻՍ, ԱԻՍԻ, ԱԻԱԱ, ՍԻՍԻ, ՍՍ, ԱՍ, ՍԻ, ԱԱ տառերը[37]։ Ա և Ս տառերը իրարից տարբերող պուչիկը դեռևս կասկած է առաջացնում Այասում փողերանոցի գոյությունը ապացուցելու հարցում։ Հայաստանի պատմ. պետ թանգարանի դրամագետներից Մ. Ե. Կարապետյանը ևս Հեթում Ա-ի՝ թանգարանում գտնվող պղնձե դրամներից մեկը համարում է Այասի արտադրանք։ Այասում փողերանոց լինելու հարցը մասնագետների համար դեռևս մնում է վիճելի։ Սակայն ցարդ չի

---

32 Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, հատ. Գ, էջ 320 և հավելված 131։

33 V. Langlois, Voyage dans la Cilicie, Paris, 1861, էջ 138։

34 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 357։

35 Ս. Էփրիկյան, Բնաշխարհիկ Բառարան, հատ. Ա, էջ 142. Այաս։ Г. Г. Микаелян, նշվ. աշխ., էջ 376։

36 Օ. Սեքուլյան, Այաս քաղաքին մէջ կոխուած հայ դրամներ, «Հանդէս ամսօրյա», 1968, թիվ 4—6, էջ 218։

37 Նույն տեղում, էջ 215—218։

գտնվել Այասում պատրաստված արծաթե դրամ[38], և հայ մատենագիրներից ոչ մեկը Այասը չի գրել Աիաս ուղղագրությամբ։ Նրանք ընդհանրապես գրել են Այաս, Յայաս[39], Եգեաս, Էգիո[40] ձևերով։ Կիլիկիայի հայկական դրամների կորպուսը կազմող Զ. Պ. Պտուկյանը[41] համաձայն չէ Այասում փողերանոց լինելու գաղափարի հետ։ Մեծ հավանականությամբ կարելի է ասել, որ Կիլիկիայի հայկական պետության փողերանոցի դրոշմիչները պատրաստվում էին իտալացի (հատկապես վենետիկցի, ջենովացի ու ֆլորենտացի) փորագրիչների մոտ։

КИЛИКИЙСКИЙ ПОРТОВЫЙ ГОРОД АЙАС

М. Г. ДЖЕВАИРДЖЯН

(Резюме)

В течение XIII—XIV вв. портовый город Киликии Айас играл видную роль в международной морской торговле. В статье приводятся подробные данные об истории этого города, в частности, в период существования Киликийского армянского государства. Подробно рассматриваются дворцовые и гражданские сооружения города, его военно-морской и торговый порты, торговля и ремесла, характеризуются культура и другие стороны городской жизни.

---

38 Նույն տեղում, էջ 214։ Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 374, և „Ayas, son port, son commerce et ses relations avec l'occident“, Venise, 1899, էջ 70—71։

39 «Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ.», հատ. Բ, էջ 80 և 512։

40 Նույն տեղում, էջ 188, Ներսես Պալիենցի ժամանակագրությունում։

41 Զարեհ Պտուկյան, Կիլիկյան Հայաստանի դրամները, Վիեննա, 1963, էջ 277—279։ Տե՛ս նաև՝ № 1304—1326 ու № 1422—3 դրամները։